

Կարեն Բոթոյանն այցելեց Գավառի մարզադպրոց

12.07.2017

Հուլիսի 12-ին Գավառի մարզադպրոցում կազմակերպվել էր անվանի բռնցքամարտիկ Գարիկ Ղարիբյանի անվան հուշամրցաշար: Բռնցքամարտի բաց առաջնությանը մասնակցում էին Երևանի՝ „Դինամո,, Հրազդանի, Սևանի, Լիճքի, Գավառի և Հայաստանի մարզիկների միավորման մարզադպրոցների բռնցքամարտիկները: Մրցաշարի բացմանը ներկա էին Գեղարքունիքի մարզպետ Կարեն Բոթոյանը, Գավառի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանը, մարզիկներ, հյուրեր, երկրպագուներ: Շրջելով մարզադպրոցում՝ մարզպետը ծանոթացավ տեղի պայմաններին և հնարավորություններին, մարզադպրոցի պատմությանը, զրուցեց մարզիկների և մարզիկների հետ: Կարեն Բոթոյանը իր խոսքում նշեց, որ առաջին անգամ է Գավառի մարզադպրոցում և հաճելիորեն տպավորված է մարզադպրոցի առկա ձեռքբերումներով և , որ ինքը հաճույքով է մասնակցում նման մրցաշարերի: Մարզպետի խոսքով նման մրցաշարերը նպաստում են մարզաձևի զարգացմանը, իսկ մարզիկները ձեռք են բերում շփում և հնարավորություն՝ իրենց ուժերը չափելու այլ մարզադպրոցների մարզիկների հետ: Առաջնության անցկացման առիթով իր ողջույնի խոսքը հղեցին նաև Գավառի քաղաքապետ Գուրգեն Մարտիրոսյանը, մարզադպրոցի տնօրեն Դավիթ Ասոյանը: Բռնցքամարտի առաջնությունը կշարունակվի մինչև հուլիսի 13-ը: Հաղթող ճանաչված մարզիկները կպարգևատրվեն Գ. Ղարիբյանի անվան հուշամեդալով և մարզադպրոցի կողմից սահմանված դիպլոմներով :